

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԼՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց Անկախության տոնի միջոցառմանը 20.09.2013թ.**

Սեպտեմբերի 20-ին Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը Իջևանի մշակույթի տանը մասնակցեց Անկախության տոնին նվիրված միջոցառմանը, որը կազմակերպել էր Իջևանի վարժարանը: Մարզպետի տեղակալը շնորհավորեց տոնի առթիվ և Տավուշի մարզպետի շնորհակալագրեր հանձնեց աշխատանքում աչքի ընկած մի խումբ ուսուցիչների:

**Մարզպետի տեղակալ Վահե Վարդապետյանը հանձնեց պատվոգրեր 13.09.2013թ.**

Սեպտեմբերի 13-ին Տավուշի մարզպետի տեղակալ Վահե Վարդապետյանը մասնակցեց Իջևանի թիվ 1 դպրոցում անցկացված ամենամյա մարզկան փառատոնին և Տավուշի մարզպետի պատվոգրեր հանձնեց ֆիզկուլտուրա ու ռազմագիտություն առարկաների ուսուցիչներ Վովա Փաշինյանին, Համլետ Այդինյանին, Ալբերտ Գրիգորյանին, Ռոբերտ Քամայանին, Գրիգորի Մինասյանին:

**Մարզպետի տեղակալ Վահե Վարդապետյանը շնորհավորեց Հաղարծինի դպրոցի նոր ուսումնական տարին 02.09.2013թ.**

Սեպտեմբերի 2-ին Տավուշի մարզպետի տեղակալ Վահե Վարդապետյանը Հաղարծինի միջնակարգ դպրոցում մասնակցեց Գիտելիքի օրվան նվիրված հանդիսավոր միջոցառմանը և նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ շնորհավորեց դպրոցի սաներին ու ուսուցիչներին:

**Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց Մովսես գյուղի օրվան նվիրված միջոցառմանը 10.08.2013թ.**

Օգոստոսի 10-ին Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը Նոյեմբերյանի տարածաշրջանի Մովսես համայնքում մասնակցեց „Մովսես գյուղի օր,, միջոցառմանը, որին ներկա էին նաև ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանը, մարզի հոգևոր դասը, բազմաթիվ հյուրեր: Մարզպետի տեղակալը Մովսեսում մասնակցեց նաև հայ մեծանուն գրողներ Հովհաննես Թումանյանի և Գաբրիել Սունդուկյանի կիսանդրիների բացման արարողությանը, որոնք տեղադրված են գյուղի մշակույթի տան բակում:

**Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց մարզում Հնդկական մշակույթի օրերի բացման արարողությանը 09.08.2013թ.**

Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց մարզում օգոստոսի 9-14-ը անցկացվող հնդկական մշակույթի օրերի բացման հանդիսավոր արարողությանը, որը նվիրված էր Հնդկաստանի անկախության 67-րդ տարեդարձին: „Հնդկական մշակույթի օրեր,, միջոցառումների մեկնարկը տրվեց օգոստոսի 9-ին Իջևանի պատկերասրահում կազմակերպված ցուցահանդեսով, որին մասնակցեց նաև Հայաստանում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սուրեշ Բաբուն: Լևոն Սարգսյանը օրվա առթիվ շնորհավորեց ու բարին մաղթեց ներկաներին:

**Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց Արճիսի տոնակատարությանը 07.07.2013թ.**

Հուլիսի 7-ին Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը Նոյեմբերյանի տարածաշրջանի Արճիս համայնքում մասնակցեց գյուղի հիմնադրման 300-ամյակին նվիրված տոնակատարությանը և խաչքարի բացման հանդիսավոր արարողությանը:

**Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց Երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառումներին 01.06.2013**

Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը հունիսի 1-ին մասնակցեց Իջևանի Շատրվանների հրապարակում Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառմանը, շնորհավորեց փոքրիկներին տոնի առթիվ: Լևոն Սարգսյանը մասնակցեց նաև օրվա առթիվ կազմակերպված հանդիսավոր երթին:

**Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց Վերջին զանգի արարողություններին 24.05.2013թ.**

Մայիսի 24-ին մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց Իջևանի վարժարանում և ավագ դպրոցում կազմակերպված՝ Վերջին զանգի արարողություններին և շնորհավորեց ու բարեմաղթանքներ հղեց շրջանավարտներին հիշարժան օրվա կապակցությամբ:

**Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը ողջունեց ասմունքի մանկապատանեկան փառատոնի մասնակիցներին 18.05.2013թ.**

Մայիսի 18-ին Տավուշի մարզպետարանի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի բարձր հովանու ներքո անցկացվող ասմունքի հանրապետական մանկապատանեկան 6-րդ փառատոնի մարզային փուլը, որն այս անգամ նվիրված էր 20-րդ դարի հայ մեծանուն գրողներ Պարույր Սևակի ու Համո Սահյանի պոեզիային: Փառատոնի մասնակիցներին ողջունեց ու շնորհավորեց Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը:

**Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը Խաշթառակում մասնակցեց Մայիսի 9-ի տոնակատարություններին 09.05.2013թ.**

Հաղթանակի ու խաղաղության օրը՝ մայիսի 9-ին, Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց Խաշթառակի նորակառույց Սբ. Դավիթ եկեղեցու օծման հանդիսավոր արարողությանը և Հաղթանակի ու խաղաղության օրվա առթիվ կազմակերպված տոնական միջոցառմանը:

**Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը ծաղկեպսակ դրեց ազատամարտի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար-հուշարձանին 08.05.2013թ.**

Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը 2013 թվականի մայիսի 8-ին Իջևանում մասնակցեց Երկրապահի օրվան նվիրված հանդիսավոր միջոցառմանը, որը կազմակերպվել էր Ազատամարտիկների հրապարակում: Մարզպետի տեղակալը Իջևանի քաղաքապետ Վարդան Ղալումյանի հետ ծաղկեպսակ դրեց ազատամարտի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար-հուշարձանին:

**Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց մայիսմեկյան ծառատունկին 01.05.2013թ.**

Մայիսի 1-ին մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց „Դիլիջան,, ազգային պարկում կազմակերպված ծառատունկին, որը կազմակերպվել էր Հայաստանի բնապահպանության նախարարության և Դիլիջանի միջազգային դպրոցի համատեղ ջանքերով՝ Պարզ լիճ տանող ճանապարհի 5-րդ կիլոմետրին հարակից 1 հեկտար տարածքում:

**Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց Դիտավանի դպրոցի բացմանը 22.04.2013թ.**

Ապրիլի 22-ին Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց Դիտավանի նորակառուց դպրոցի բացման հանդիսավոր արարողությանը: Դպրոցը կառուցվել է արգենտինահայ բարերարներ Արմեն և Նատիա Էքսերճիէանների միջոցներով, ովքեր հովանավորում են Դիտավանի զարգացման ծրագիրը:

**Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց ոստիկանության 95-ամյակին նվիրված միջոցառմանը 13.04.2013թ.**

2013 թվականի ապրիլի 13-ին Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը Նոյեմբերյան քաղաքում մասնակցեց ՀՀ ոստիկանության ստեղծման 95-ամյակին նվիրված միջոցառմանը, որը կազմակերպվել էր Նոյեմբերյանի կինոթատրոնի շենքում: